ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Խ-401-02.12.2019-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 375-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով.

«3. Վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, ծագող պարտավորության կատարման ապահովման համար անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորի հետ կնքված երաշխավորության պայմանագրում պետք է նշվի երաշխավորի պատասխանատվության առավելագույն ծավալը՝ գումարային արտահայտմամբ, ինչպես նա– այն ժամկետը, որով տրամադրվել է երաշխավորությունը:»:

Հոդված 2.

Օրենսգրքի 377-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 377. Երաշխավորի պատասխանատվությունը

1. Պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը պարտատիրոջ առջ– կրում է սուբսիդիար պատասխանատվություն, եթե երաշխավորի համապարտ պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

2. Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պարտատիրոջ առջ– կրում է սուբսիդիար պատասխանատվություն, բացառությամբ սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված դեպքերի:

3. Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պարտատիրոջ առջ– կրում է համապարտ պատասխանատվություն, եթե դա

նախատեսված է երաշխավորության պայմանագրով – միաժամանակ պայմանագրի կնքման պահին առկա է հետ–յալ պայմաններից առնվազն մեկը՝

1) երաշխավորն ու պարտապանը հանդիսանում են նույն ընտանիքի անդամներ: Սույն կետի իմաստով նույն ընտանիքի անդամներ են համարվում ամուսինը, ծնողները, պապը, տատը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրն ու նրանց ամուսինները – 18 տարին լրացած նրանց զավակները.

2) երաշխավորը հանդիսանում է պարտապան իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամ կամ պարտապան իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր.

3) երաշխավորը հանդիսանում է պարտապան իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ իրական շահառուն:

Իրական շահառու է համարվում «Փողերի լվացման – ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրական շահառու հանդիսացող անձը.

4) երաշխավորն ու պարտապանն ունեն համատեղ գործունեության պայմանագիր – երաշխավորությամբ ստացվող միջոցներն այդ համատեղ գործունեության (համատեղ գործունեության պայմանագրի կատարման) համար են:

4. Վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, ծագող պարտավորության կատարման ապահովման համար երաշխավորության պայմանագիրը կնքելիս անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը – պարտապանը տալիս են գրավոր հայտարարություն՝ սույն հոդվածի երրորդ մասի երրորդ կետով նշված պարտապան իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ, ինչպես նա– սույն հոդվածի երրորդ մասի չորրորդ կետով նշված երաշխավորությամբ ստացվող միջոցներն այդ համատեղ գործունեության (համատեղ գործունեության պայմանագրի կատարման) համար օգտագործելու մասին, – կրում են հայտարարության բովանդակության իսկության ռիսկը:

Հետագայում պարտապանի – երաշխավորի՝ սույն հոդվածի երրորդ մասով թվարկված փոխկապվածության դադարումը կամ փոփոխությունը չի հանգեցնում երաշխավորության պայմանագրի գործողության ընթացքում երաշխավորի պատասխանատվության փոփոխության:

5. Երաշխավորը պարտատիրոջ առջ– պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու հետ–անքով առաջացող տույժերը – տուգանքները, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը – պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետ–անքով առաջացած պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով, իսկ այն դեպքում, երբ երաշխավոր է հանդիսանում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող

ֆիզիկական անձը – երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը ծագում է վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը՝ պահպանելով սույն օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Եթե պարտապանի պարտավորության ծավալը որ–է հիմքով, այդ թվում՝ պարտավորությունների մորատորիումի (սառեցման) հիմքով նվազում է կամ դադարում է աճել, ապա երաշխավորի պատասխանատվությունը համապատասխան ծավալով նվազում է կամ դադարում է աճել:

6. Երաշխավորության պայմանագիրը կարող է կնքվել ավելի երկար ժամկետով, քան երաշխավորությամբ ապահովված պարտավորության վերաբերյալ պայմանագիրը:

7. Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում պարտատերը պարտավոր է այդ մասին ծանուցել երաշխավորին՝ առնվազն նշելով պարտավորության խախտման ժամկետը – առկա պարտավորության չափը: Եթե պարտատերը սույն մասում նշված ժամկետում չի ծանուցում երաշխավորին, ապա պարտատերն իրավունք չունի երաշխավորից պահանջել երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը պարտապանի կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետ–անքով առաջացած տոկոսները, առաջացող տույժերը, տուգանքները – (կամ) կատարել այլ վճարներ, որոնք առաջացել են պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու օրվանից՝ մինչ– երաշխավորին այդ մասին ծանուցելը:

8. Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պարտատիրոջ կողմից երաշխավորին պահանջ ներկայացվելու դեպքում երաշխավորը պարտավոր է կատարել իր պարտավորությունն այդ պահանջը ստանալու օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե երաշխավորության պայմանագրով կամ պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջով երաշխավորի կողմից պարտավորության կատարման ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:

9. Համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջ– պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Հոդված 3.

Օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, եթե այլ բան չի բխում երաշխավորության պայմանագրից» բառերը:

Հոդված 4.

Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) դրանով ապահովված պարտավորությունը դադարելու դեպքում, ինչպես նա– առանց երաշխավորի գրավոր համաձայնության՝ պարտավորությունը փոփոխելու դեպքում՝ միայն փոփոխված մասով, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետ–անքների:

Երաշխավորության պայմանագրի այն պայմանը, որով երաշխավորը նախապես համաձայնություն է տալիս իր պարտավորությունը նման ձ–ով փոփոխելուն, առ ոչինչ է: Սույն պարբերության իմաստով երաշխավորի համաձայնությունը չի պահանջվում, եթե երաշխավորը երաշխավորությունը ստանձնում է հիմնական պարտավորության վերաբերյալ այն պայմանագրով, որով ապագայում ծագելիք պարտավորության բոլոր էական պայմանները սահմանված են:»

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ին:
2. Սույն օրենքը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո կնքված երաշխավորության պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:
3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 7-րդ – 8-րդ մասերով, ինչպես նա– սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված կարգավորումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո առաջացող իրավահարաբերությունների նկատմամբ՝ անկախ երաշխավորության պայմանագիրը մինչ– սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված լինելու հանգամանքից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Խ-401-02.12.2019-ՖՎ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 375-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով.

«3. ~~Անհատ~~Վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, ծագող պարտավորության կատարման ապահովման համար անհատ ձեռնարկատեր ~~կամ իրավաբանական անձ~~ չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորի հետ կնքված երաշխավորության պայմանագրում պետք է նշվի ~~երաշխավորության~~երաշխավորի պատասխանատվության առավելագույն ծավալը՝ գումարային ~~չափը՝ թվային արտահայտությամբ: Երաշխավորության պայմանագրում պետք է հստակ նշվի~~արտահայտմամբ, ինչպես նաև այն ժամկետը, որով տրամադրվել է երաշխավորությունը:»:

Հոդված 2.

Օրենսգրքի 377-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 377. Երաշխավորի պատասխանատվությունը

4. Պարտապանի- կողմից- երաշխավորությամբ- ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը պարտատիրոջ առջև կրում է սուբսիդիար պատասխանատվություն, եթե երաշխավորի համապարտ պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

~~7.~~5. Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված

պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պարտատիրոջ առջև կրում է սուբսիդիար պատասխանատվություն, բացառությամբ սույն ~~մասի երկրորդ պարբերությամբ~~հոդվածի երրորդ մասով նախատեսված դեպքերի:

6. ~~Պարտապանի~~Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պարտատիրոջ առջև կրում է համապարտ պատասխանատվություն, եթե դա նախատեսված է երաշխավորության պայմանագրով և միաժամանակ պայմանագրի կնքման պահին առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝

~~ա.~~ 1) երաշխավորն ու պարտապանը հանդիսանում են նույն ընտանիքի անդամներ: Սույն կետի իմաստով նույն ընտանիքի անդամներ են համարվում ~~ծնողը, զավակը, ամուսինը~~ամուսինը, ծնողները, պապը, տատը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրն ու նրանց ամուսինները և 18 տարին լրացած նրանց զավակները.

~~բ.~~ 2) երաշխավորը հանդիսանում է պարտապան իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամ կամ պարտապան իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր.

~~գ.~~ 3) երաշխավորը ~~պարտատիրոջը գրավոր հայտնել է, որ ինքը~~ հանդիսանում է պարտապան իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ իրական շահառուն:

Իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրական շահառու հանդիսացող անձը.

4) երաշխավորն ու պարտապանն ունեն համատեղ գործունեության պայմանագիր և երաշխավորությամբ ստացվող միջոցներն ~~ուղղված են~~ այդ համատեղ ~~գործունեությանը~~ գործունեության (համատեղ գործունեության պայմանագրի ~~կատարմանը):~~կատարման) համար են:

~~1. Պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր երաշխավորը պարտատիրոջ առջև կրում է սուբսիդիար պատասխանատվություն, եթե իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր երաշխավորի համապարտ պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:~~

~~2. Երկու կամ ավելի անձանց կողմից համատեղ երաշխավորություն ստանձնելիս պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում պարտատերն իրավունք ունի ամբողջ ծավալով կամ մասամբ իր պահանջը ներկայացնել ինչպես պատասխանատվություն կրող բոլոր երաշխավորներին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին իր նախընտրած հերթականությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համատեղ երաշխավորներից մեկը պարտապանի առջև կրում է համապարտ, իսկ մյուսը՝ սուբսիդիար պատասխանատվություն: Այդ դեպքում պարտատերը պարտավոր է առաջին հերթին պահանջ ներկայացնել պարտապանի առջև համապարտ, իսկ հետո՝ սուբսիդիար պատասխանատվություն կրող երաշխավորներին:~~

~~3. Սույն հոդվածի իմաստով երաշխավորի սուբսիդիար պատասխանատվությունը նշանակում է, որ պարտապանի կողմից պարտատիրոջ առջև իր պարտականությունը չկատարվելու կամ անպատշաճ կատարվելու դեպքում պարտատերը երաշխավորին պահանջ ներկայացնելու իրավունք ունի, եթե պարտապանը չի բավարարել պարտատիրոջ պահանջը և սպառվել են պարտատիրոջ պահանջի բավարարման բոլոր հնարավոր միջոցները:~~

~~Սույն մասի իմաստով՝ պարտատիրոջ պահանջի բավարարման բոլոր հնարավոր միջոցները սպառված են համարվում հետևյալ պայմաններից առնվազն մեկի առկայության դեպքում՝~~

~~1) պարտապանը ճանաչվել է սնանկ.~~

~~2) առկա է հարկադիր կատարողի որոշումը կատարողական վարույթն ավարտելու վերաբերյալ՝ պարտապանի գույքի բացակայության կամ անբավարության կամ պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով.~~

~~3) պարտապանի պարտավորությունների համար գրավադրված գույքն իրացնելուց ստացված գումարը կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած գույքի արժեքը բավարար չէ պարտապանի պարտավորությունների կատարման համար:~~

4. Վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, ծագող պարտավորության կատարման ապահովման համար երաշխավորության պայմանագիրը կնքելիս անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը և պարտապանը տալիս են գրավոր հայտարարություն՝ սույն հոդվածի երրորդ մասի երրորդ կետով նշված պարտապան իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ, ինչպես նաև սույն հոդվածի երրորդ մասի չորրորդ կետով նշված

երաշխավորությամբ ստացվող միջոցներն այդ համատեղ գործունեության (համատեղ գործունեության պայմանագրի կատարման) համար օգտագործելու մասին, և կրում են հայտարարության բովանդակության իսկության ռիսկը:

Հետագայում պարտապանի և երաշխավորի՝ սույն հոդվածի երրորդ մասով թվարկված փոխկապվածության դադարումը կամ փոփոխությունը չի հանգեցնում երաշխավորության պայմանագրի գործողության ընթացքում երաշխավորի պատասխանատվության փոփոխության:

~~8.~~ 5. Երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու հետևանքով առաջացող տույժերը և տուգանքները, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած պարտատիրոջ այլ վնասները հատուցելը՝, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով, իսկ այն դեպքում, երբ երաշխավոր է հանդիսանում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը և երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը ծագում է վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը՝ պահպանելով սույն օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները~~, եթե պատասխանատվության ավելի փոքր ծավալ նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով: Ընդ որում՝ եթե~~: Եթե պարտապանի պարտավորության ծավալը որևէ հիմքով, այդ թվում՝ պարտավորությունների մորատորիումի (սառեցման) հիմքով նվազում է կամ դադարում է աճել, ապա երաշխավորի պատասխանատվությունը համապատասխան ծավալով նվազում է կամ դադարում է աճել:

~~9. Երաշխավորի պարտավորության չափը չի կարող գերազանցել պարտապանի պարտավորությունը, և երաշխավորության~~6. Երաշխավորության պայմանագիրը ~~չի~~ կարող ~~կնքված լինել~~է կնքվել ավելի ~~վատթար պայմաններով~~երկար ժամկետով, քան երաշխավորությամբ ապահովված պարտավորության վերաբերյալ պայմանագիրը:

10. ~~Պարտապանի~~ Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից ~~իր պարտականությունը~~երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում ~~ոչ ուշ, քան դրա հաջորդերեք~~ աշխատանքային ~~օրը~~օրվա ընթացքում պարտատերը պարտավոր է այդ մասին ծանուցել երաշխավորին՝ առնվազն նշելով պարտավորության խախտման

ժամկետը և առկա պարտավորության չափը: Եթե ~~պարտատերն~~պարտատերը սույն մասում նշված ժամկետում չի ծանուցում երաշխավորին, ապա պարտատերն իրավունք չունի երաշխավորից պահանջել երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը պարտապանի կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած~~-~~ տոկոսները, առաջացող տույժերը, տուգանքները և (կամ) կատարել այլ վճարներ, որոնք առաջացել են պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու օրվանից՝ մինչև երաշխավորին այդ մասին ~~ծանուցում ուղարկելը~~ծանուցելը:

11. ~~Պարտապանի կողմից իր պարտականությունը~~Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պարտատիրոջ կողմից երաշխավորին պահանջ ներկայացվելու դեպքում երաշխավորը պարտավոր է կատարել իր ~~պարտականությունն~~պարտավորությունն այդ պահանջը ~~ներկայացվելուստանալու~~ օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե երաշխավորության պայմանագրով կամ պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջով երաշխավորի կողմից պարտավորության կատարման ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:~~ Ընդ որում՝ երաշխավորը պարտավոր է սույն մասով սահմանված ժամկետում կատարել պարտատիրոջ պահանջը, եթե պարտատերն ունի այդ պահանջը ներկայացնելու իրավունք:»:~~

12. Համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Հոդված 3.

Օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, եթե այլ բան չի բխում երաշխավորության պայմանագրից» բառերը:

Հոդված 4.

Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) դրանով ապահովված պարտավորությունը դադարելու դեպքում, ինչպես նաև առանց երաշխավորի գրավոր համաձայնության՝ պարտավորությունը փոփոխելու դեպքում~~ (դադարում է~~՝ միայն փոփոխված մասով~~)~~, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների:~~ Ընդ որում, երաշխավորի համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր անգամ, երբ կատարվում է նրա պատասխանատվությունը մեծացնող կամ իր համար այլ անբարենպաստ հետևանքներ առաջացնող փոփոխություն, իսկ երաշխավորության~~

Երաշխավորության պայմանագրի այն պայմանը, որով երաշխավորը նախապես համաձայնություն է տալիս իր պարտավորությունը նման ձևով փոփոխելուն, համարվում է առ ոչինչ.»:առ ոչինչ է: Սույն պարբերության իմաստով երաշխավորի համաձայնությունը չի պահանջվում, եթե երաշխավորը երաշխավորությունը ստանձնում է հիմնական պարտավորության վերաբերյալ այն պայմանագրով, որով ապագայում ծագելիք պարտավորության բոլոր էական պայմանները սահմանված են:»

Հոդված 5.

Օրենսգիրքը լրացնել նոր 382.1-ին հոդվածով.

«Հոդված 382.1. Պարտապանի կամ երաշխավորի մահը

1. Երաշխավորի կամ պարտապանի մահվան դեպքում երաշխավորության պայմանագիրը դադարում է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Պարտապանի մահվան դեպքում երաշխավորության պայմանագիրը չի դադարում, եթե երաշխավորը հանդիսանում է պարտապանի ծնողը, զավակը, ամուսինը, բացառությամբ այն դեպքի, երբ պարտապանի ծնող, զավակ կամ ամուսին հանդիսացող երաշխավորին իրավահաջորդության կարգով անցնում է պարտապանի՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը:»:

Հոդված 6.

1.4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը2022 թվականի հունվարի 1-ին:

2.5. Սույն օրենքը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո առաջացող հարաբերությունների վրակնքված երաշխավորության պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերովմասով նախատեսված դեպքերի:

3.6. Սույն օրենքի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված կարգավորումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո առաջացող իրավահարաբերությունների նկատմամբ՝ անկախ երաշխավորության պայմանագիրը մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված լինելու հանգամանքից:

1. Եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող երաշխավորության պայմանագրում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարվում է որևէ պայմանի փոփոխություն, ապա փոփոխություն կատարելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում այդ երաշխավորության պայմանագրի պայմանները, այդ թվում՝ երաշխավորի պատասխանատվությանը վերաբերող մասով, ամբողջությամբ համապատասխանեցվում են սույն օրենքի

~~պահանջներին: Սույն մասով նախատեսված դեպքերում երաշխավորության պայմանագրի պայմանները սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցվելու դեպքում, երաշխավորության պայմանագիրը համարվում է անվավեր:~~

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Խ-401-02.12.2019-ՖՎ-011/1*)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկի հեղինակը	***Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը***	***Առաջարկը***	***Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը***	***Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը***
ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական զեկուցող Արկադի	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ՝ «Վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, ծագող պարտավորության կատարման ապահովման համար անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորի հետ կնքված երաշխավորության պայմանագրում պետք է նշվի երաշխավորի պատասխանատվության առավելագույն ծավալը՝ գումարային արտահայտմամբ, ինչպես նաև այն	Ընդունելի է	Ընդունվել է

Խաչատրյան		ժամկետը, որով տրամադրվել է երաշխավորությունը»		
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին մաս	Հանել «անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ» բառերը, «բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «եթե երաշխավորի համապարտ պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով» բառերով	Ընդունելի է	Ընդունվել է
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին մաս	2-րդ պարբերությունը դարձնել 3-րդ մաս և շարադրել նոր խմբագրությամբ՝ «Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պարտատիրոջ առջև կրում է համապարտ պատասխանատվություն, եթե դա նախատեսված է երաշխավորության պայմանագրով և միաժամանակ պայմանագրի կնքման պահին առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝	Ընդունելի է	Ընդունվել է

		1) երաշխավորն ու պարտապանը հանդիսանում են նույն ընտանիքի անդամներ: Սույն կետի իմաստով նույն ընտանիքի անդամներ են համարվում ամուսինը, ծնողները, պապը, տատը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրն ու նրանց ամուսինները և 18 տարին լրացած նրանց զավակները. 2) երաշխավորը հանդիսանում է պարտապան իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամ կամ պարտապան իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր. 3) երաշխավորը հանդիսանում է պարտապան իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ իրական շահառուն: Իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրական շահառու հանդիսացող անձը. 4) երաշխավորն ու պարտապանն ունեն համատեղ գործունեության պայմանագիր և երաշխավորությամբ ստացվող միջոցներն այդ համատեղ գործունեության (համատեղ		

		գործունեության պայմանագրի կատարման) համար են:»		
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ՝ «Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պարտատիրոջ առջև կրում է սուբսիդիար պատասխանատվություն, բացառությամբ սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված դեպքերի:»	Ընդունելի է	Ընդունվել է
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մաս	Հանել Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մասը	Ընդունելի է	Ընդունվել է
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 4-րդ մաս	Շարարդրել նոր խմբագրությամբ՝ «Վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, ծագող պարտավորության կատարման ապահովման համար	Ընդունելի է	Ընդունվել է

զեկուցող Արկադի Խաչատրյան		երաշխավորության պայմանագիրը կնքելիս անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը և պարտապանը տալիս են գրավոր հայտարարություն՝ սույն հոդվածի երրորդ մասի երրորդ կետով նշված պարտապան իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ, ինչպես նաև սույն հոդվածի երրորդ մասի չորրորդ կետով նշված երաշխավորությամբ ստացվող միջոցներն այդ համատեղ գործունեության (համատեղ գործունեության պայմանագրի կատարման) համար օգտագործելու մասին, և կրում են հայտարարության բովանդակության իսկության ռիսկը: Հետագայում պարտապանի և երաշխավորի՝ սույն հոդվածի երրորդ մասով թվարկված փոխկապվածության դադարումը կամ փոփոխությունը չի հանգեցնում երաշխավորության պայմանագրի գործողության ընթացքում երաշխավորի պատասխանատվության փոփոխության:»		
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի	Շարադրել նոր խմբագրությամբ՝ «Երաշխավորը պարտատիրոջ առջև	Ընդունելի է	Ընդունվել է

ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	377-րդ հոդվածի 5-րդ մաս	պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու հետևանքով առաջացող տույժերը և տուգանքները, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով, իսկ այն դեպքում, երբ երաշխավոր է հանդիսանում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը և երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը ծագում է վարկային կամ փոխառության պայմանագրից, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը՝ պահպանելով սույն օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Եթե պարտապանի պարտավորության ծավալը որևէ հիմքով, այդ թվում՝ պարտավորությունների մորատորիումի (սառեցման) հիմքով նվազում է կամ դադարում է		

		աճել, ապա երաշխավորի պատասխանատվությունը համապատասխան ծավալով նվազում է կամ դադարում է աճել:»		
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 6-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ՝ «Երաշխավորության պայմանագիրը կարող է կնքվել ավելի երկար ժամկետով, քան երաշխավորությամբ ապահովված պարտավորության վերաբերյալ պայմանագիրը:»	Ընդունելի է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 7-րդ մաս	1-ին նախադասությունում՝ «Պարտապանի» բառը փոխարինել «Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի» բառերով, «իր պարտականությունը» բառերը փոխարինել «երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը» բառերով, «ոչ ուշ, քան դրա հաջորդ աշխատանքային օրը» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, «երաշխավորին» բառից հետո լրացնել «՝ առնվազն նշելով պարտավորության խախտման ժամկետը և	Ընդունելի է	Ընդունվել է

		առկա պարտավորության չափը» բառերով, 2-րդ նախադասությունում՝ «ծանուցում ուղարկելու» բառերը փոխարինել «ծանուցելը» բառով		
ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդվածի 8-րդ մաս	1-ին նախադասությունում՝ «Պարտապանի» բառը փոխարինել «Վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի» բառերով, «իր պարտականությունը» բառերը փոխարինել «երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը» բառերով, «պարտականությունն» բառը փոխարինել «պարտավորությունն» բառով, «պահանջը ներկայացվելու» բառերը փոխարինել «պահանջն ստանալու» բառերով, հանել 2-րդ նախադասությունը	Ընդունելի է	Ընդունվել է
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող օրենսգրքի 377-րդ հոդված	Լրացնել 9-րդ մասով՝ «Համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:»	Ընդունելի է	Ընդունվել է

ՀՀ կառավարություն Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	Նախագծի 4-րդ հոդված	1-ին նախադասությունում՝ «դադարելու» բառից հետո լրացնել «դեպքում» բառով, «երաշխավորի» բառից հետո լրացնել «գրավոր» բառով, «(դադարում է միայն փոփոխված մասով)» բառերը փոխարինել «՝միայն փոփոխված մասով» բառերով, 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Երաշխավորության պայմանագրի այն պայմանը, որով երաշխավորը նախապես համաձայնություն է տալիս իր պարտավորությունը նման ձևով փոփոխելուն, առ ոչինչ է: Սույն պարբերության իմաստով երաշխավորի համաձայնությունը չի պահանջվում, եթե երաշխավորը երաշխավորությունը ստանձնում է հիմնական պարտավորության վերաբերյալ այն պայմանագրով, որով ապագայում ծագելիք պարտավորության բոլոր էական պայմանները սահմանված են:»	Ընդունելի է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Հանել Նախագծի 5-րդ հոդվածը	Ընդունելի է	Ընդունվել է
Հիմնական զեկուցող	Նախագծի 6-րդ հոդված	Դարձնել 5-րդ հոդված		Ընդունվել է

Արկադի Խաչատրյան				
Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս	Փոխարինել «պաշտոնական հրապարակմանն հաջորդող տասներորդ օրը» բառերը «2022 թվականի հունվարի 1-ին» բառերով		Ընդունվել է
ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մաս	Փոխարինել «առաջացող հարաբերությունների վրա» բառերը «կնքված երաշխավորության պայմանագրերի նկատմամբ» բառերով, «3-րդ և 4-րդ մասերով» բառերը փոխարինել «3-րդ մասով» բառերով	Ընդունելի է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մաս	«մասերով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված» բառերով	Ընդունելի է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն Հիմնական զեկուցող Արկադի	Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մաս	Ընդունելի է	Ընդունվել է

Խաչատրյան				
ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան Հիմնական զեկուցող Արկադի Խաչատրյան	Նախագծին ավելավնել երկու նոր օրենքների նախագծեր	Նոր օրենքների նախագծերն են՝ 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 2. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»	Ընդունելի է	Ընդունվել է